**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**4 հուլիսի 2017 թվականի N Մ-571-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հունիսի 29-ի համաձայնեցման թերթը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Մարմնամարզության միջազգային ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (մեկ տեղ, 2,941 կգ ընդհանուր քաշով, 32,843.70 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,995 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի մարմնամարզության ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**7 հուլիսի 2017 թվականի N Մ- 572 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հունիսի 29-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել BRIU GmbH ոչ առևտրային կազմակերպության կողմից որպես օժանդակություն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված դեղորայքի (5 տեղ, 87.6 կգ ընդհանուր քաշով, 600 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

02508251

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**7 հուլիսի 2017 թվականի N Մ - 573 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հուլիսի 6-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից ծեռք բերված կոպիտ սղոցված չմշակված մարմարից ուղղանկյուն և քառակուսի բլոկերը (108,570 կգ ընդհանուր քաշով, 19,832.7 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 16-ի «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագրի մասին» N Մ-147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**10 հուլիսի 2017 թվականի N Մ- 574 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հունիսի 23-ի նիստին)**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 20-ի N 01.1/14-2/11095-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հունիսի 20-ի N ԱԱՄ/ԱեՄ-2-1/6491-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 10-ի N 06/3-8/23521-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հաաստան-Արցախ հիմնադրամի կողմից Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված 69,720 զույգ հողաթափի (2,324 տեղ, 27,144.91 կգ ընդհանուր քաշով, 396,009.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բեռը բաշխելու մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**MRKU 1007702/MSKU 6963723 բեռնարկղով ստացված ապրանքների բաշխման ցանկ**

| Ապրանքի նկարագիրը | Քանակ | Չափի միավոր | Ստացողի լրիվ անվանումը | Բեռի ստացման իրական շահառուն | Արժեք ԱՄՆ $ |
|---|---|---|---|---|---|
| Հողաթափ | 20 010 | Զույգ | «Մեծն Ներսես» ԲՀԿ, ք. Երևան, Կորյունի 6 ա, բն 1, ՀՎՀՀ 01513853 | ՀՀ սահմանամերձ համայնքներին, դպրոցներին և մանկատներին | 113 656,80 |
| Հողաթափ | 5 500 | Զույգ | Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցություն, Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0019, Մ. Բաղրամյան 18 շ, ՀՎՀՀ 00032803 | ՀՀ սահմանամերձ համայնքներին, դպրոցներին, մանկապարտեզներին | 31 240,00 |
| Հողաթափ | 44 210 | Զույգ | Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք. Երևան 0010, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115 | ՀՕՖ-ի սոցիալական, կրթական, առողջ[illegible] ծրագրերի [illegible] | 251,112,80 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 69 720 | | | | 396 009,6 |

Հայ Օգնության Ֆոնդի
Հայաստանի մասնաճյուղի տնօրեն

Ա. 8/7. 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**10 հուլիսի 2017 թվականի N Մ-575-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի հուլիսի 6-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված հուշամեդալները (11 տեղ, 65.1 կգ ընդհանուր քաշով, 606 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 576 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻՏԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՊՐՈՑԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 23-ի N 01.1/14-2/11373-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի 23-ի N 02/14/10836-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հունիսի 23-ի N 03/07-1/8238-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 22-ի N 06/3-8/21489-17 ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի հունիսի 26-ի N 01/21.1/2601-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 108,177,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան համայնքի դպրոցի տարածքում մարզադահլիճի կառուցում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08404037) 2017 թվականի հունիսի 1-ին կնքված N ՀՀ/Ս-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Դիտավան համայնքի դպրոցի տարածքում մարզադահլիճի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 107,177,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09809552) 2017 թվականի հունիսի 1-ին կնքված N ՀՀՏՀ-03/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գիտության և կրթության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական

հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«20» հունիսի 2017թ

# «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան համայնքի դպրոցի տարածքում մարզադահլիճի կառուցում»

## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մարզադահլիճ կառուցել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան համայնքի դպրոցի տարածքում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ, Դիտավան համայնք, կրթության բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 108.177.000,00 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան գյուղի բնակիչները |
| 8. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ հունիսի 01-ից մինչեւ 2018թ. օգոստոսի 01-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ հունիսի 01-ից մինչև 2018թ օգոստոսի 01-ը ընկած ժամանակահատվածում 107.177.000,00 դրամ արժողությամբ, մարզադահլիճ կառուցել<br><br>իրականացնել նաև տեխնիկական հսկողություն 1.000.000,00 դրամ արժողությամբ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը | «N 1 Շինվարչություն» ԲԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան գյուղի դպրոցի տարածքում մարզադահլիճի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 107.177.000,00 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի:<br><br>«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 1.000.000,00 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Տավուշի մարզպետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր

տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 577 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիս 29-ի N 01.1/14-2/11773-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հունիսի 27-ի N 02/14/10998-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հունիսի 27-ի ԱԱՄ/ԱնՄ-2-1/6739-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 27-ի N 06/3-8/21926-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2,661,667 դրամ ընդհանուր արժողությամբ «Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ասողիկ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00835755) հետ 2017 թվականի հունիսի 19-ին կնքված N WVA/BC/PRINTING/SOD/02/FY17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 2,661,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային
բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրեն՝
Միրաք Եռիյան

18 հունիսի 2017 թ.

**«Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար»**
**Ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է նամակագրության միջոցով սերտ կապ հաստատել Հայաստանի Հանրապետության 209 համայնքներում բնակվող և «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների հովանավորության ծրագրում գրանցված 33,654 երեխաների և Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Շվեյցարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Թայվանի և Կանադայի անհատ հովանավորների միջև, որի արդյունքում Հայաստանի երեխաների համար ստեղծվում են հնարավորություններ շփվելու և ճանաչելու այլ երկրներում ապրող մարդկանց, ծանոթանալու նրանց մշակույթին և սովորույթներին, իսկ հովանավորների համար ստեղծվում են հնարավորություններ ֆինանսական աջակցություն ցուցաբերել այդ երեխաների բնակության համայնքներում՝ զարգացման ծրագրերի իրականացման միջոցով: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակավորման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | 1. «Վորլդ Վիժն» Մեծ Բրիտանիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision UK Opal Drive, Fox Milne, Milton Keynes, MK15 0ZR, UK<br>2. «Վորլդ Վիժն» ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001<br>3. «Վորլդ Վիժն» Շվեյցարիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Switzerland, Kriesbachstrasse 30, CH-8600 Duebendorf, Switzerland<br>4. «Վորլդ Վիժն» Ֆրանսիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 7 rue Pasquier - 75008 Paris, France<br>5. «Վորլդ Վիժն» Գերմանիայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Deutschland e.V. Am Houiller Platz 4 61381 Friedrichsdorf<br>6. «Վորլդ Վիժն» Թայվանի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ 6F, 133, Sec. 4, Min-Sheng East Road, Taipei 105, Taiwan<br>7. «Վորլդ Վիժն» Կանադայի աջակցող գրասենյակ<br>հասցե՝ World Vision Canada, 2500-1 [illegible], Mississauga, ON L5T 0A7 Canada |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ Երևան, Ռ. Մելիքյան [illegible] 02528759, հեռախոս՝+37460491010* |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրն է [illegible] «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի [illegible] Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, [illegible], Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 209 [illegible] (համայնքների ցանկը կցվում է):<br>Ծրագրի բնագավառը՝ սոցիալական |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 2,661,667 (երկու միլիոն վեց հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 209 համայնքներում բնակվող 33,654 երեխաները:<br>Երեխաների տվյալների հավաքագրման ժամանակ կնքվում է երկկողմանի համաձայնագիր, որը հաստատում է տվյալ երեխայի ծնողի համաձայնությունը՝ երեխաներին «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից տվյալ համայնքում իրականացվող ծրագրերում ընդգրկելու մասին: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 19 հունիսի 2017 թ. – 31 հուլիսի 2017 թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսված է 2017 թ. հունիսի 19-ից մինչև 2017 թ. հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում նամակագրական նյութեր տպագրել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների հովանավորության ծրագրի համար:<br>Տպագրական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում 2,661,667 (երկու միլիոն վեց հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>Նամակագրության թարգմանությունը իրականացվում է Երեխաների հովանավորության ծրագրի աշխատակիցների կողմից: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երեխաների Հովանավորության ծրագրի աշխատանքներն ապահովելու համար տպագրվելու են երեխաների տարեկան անհատական զեկույցի ձևեր: Տարեկան անհատական զեկույցի ձևերի տպագրությունն իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցույթային կարգով ընտրել է կազմակերպություն և ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքելու «Աստղիկ» ՍՊԸ-ի հետ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2,661,667 (երկու միլիոն վեց հարյուր վաթսունմեկ հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի:<br>Աշխատանքները սկսվելու են 2017 թ. հունիսի 19-ին և ավարտվելու են մինչև 2017 թ. հուլիսի 31-ը: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր ներկայացված ծրագրով նախատեսված չեն: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 209 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի անմիջական վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանի, Գյումրու, Ամասիայի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վարդենիսի, Գավառի, Ճամբարակի, Սիսիանի, Կապանի, Ստեփանավանի, Ալավերդու, Ապարանի և Թալինի Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Հովանավորության բաժնի |

9/2

9/2

| | | |
|---|---|---|
| | | մասնագետների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Հովանավորության բաժնի ղեկավար

Մադլեն Մուրադյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 578 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 29-ի N 01.1/14-2/1172217, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2017 թվականի հունիսի 29-ի N 01/3.1/3808-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի 29-ի N 06/3-8/22252-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի FUNDS ARMENIEN DE FRANCE մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված դաշնամուրների (35 հատ. 21,000 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 4,100 եվրո, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց հանձնվելու է Պ. Չայկովսկու անվան երաժշտական միջնակարգ մասնագիտական դպրոցին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ծնակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Երևանի քաղաքապետարանին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 579 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 29-ի N 01.1/14-2/11727-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունիսի 30-ի N ՆՁ/22.2/8308-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հունիսի 29-ի N 06/3-8/22219-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված երկու խմբաքանակ բժշկական պարագաների ներմուծման ծրագիրը՝

1) 5 տեղ. 776 կգ քաշով, 186,935.61 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,750 ԱՄՆ-ի դոլար.

2) 4 տեղ. 1,141 կգ քաշով, 51,695.19 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,000 ԱՄՆ-ի դոլար:

Մաքսային ձևակերպումները կատարվելու են «Արարատյան» մաքսատուն-վարչությունում:

Բեռներն անհատույց հանձնվելու են Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Բժշկական կենտրոն» հիվանդանոցին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 580 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 29-ի N 01.1/14-2/11721-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 29-ի N 06/3-8/22246-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալայանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 27.05.2015 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված տուրիստական պարագաների (4 տեղ, 109 կգ ընդհանուր քաշով, 37,1900 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, բեռի ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

9/3.8

**ՑԱՆԿ**
Ռուսաստանից ՌԴ քաղաքացի Հայկ Վլադիմիրի Բալայանի կողմից **N82301486111 առ 20.06.2017թ.** ավիաբեռնագրով ուղարկված բեռի

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեղերի թիվը | Քանակը /հատ/ | Քաշը /կգ/ | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վրան "ARPENAZ 2+" | 1 | 2 | 6 | 2000 |
| 2 | Վրան "ARPENAZ 3" | | 5 | 6 | 5000 |
| 3 | Վրան "ARPENAZ 3+" | | 5 | 6 | 5000 |
| 4 | Վրան "OUTVENTURE" | | 1 | 6 | 1000 |
| 5 | Տուրիստական ճոպան | | 1 արկղ | 4 | 2000 |
| 6 | Ուզբեկական փլավի կաթսա իր պարագաներով | | 1 փաթեթ | 30 | 5000 |
| 7 | Թենիսի թիակի լրակազմ | 1 | 4 | 3 | 1000 |
| 8 | Մանկական տուրիստական բազմագույն ուսապարկ | | 10 | 4 | 2000 |
| 9 | Ֆուտբոլի գնդակներ | | 5 | 3 | 1000 |
| 10 | Խաղային թռչող սկավառակներ | | 4 | 1 | 200 |
| 11 | Տուրիստական ծածկոց | | 2 | 4 | 600 |
| 12 | Լապտեր | | 3 | 9 | 600 |
| 13 | Մետաղական ճամփորդական բաժակներ | 1 | 2 | 1 | 200 |
| 14 | Սեղանի թենիսի թիակներ և գնդակներ | | 6 | 3 | 1000 |
| 15 | Տուրիստական գլխարկ | | 2 | 0.5 | 200 |
| 16 | Գնդակի պոմպ լրակազմով | | 1 լրակազմ | 2 | 100 |
| 17 | Տուրիստական կողմնացույց OUTVETURE | | 6 | 2 | 600 |
| 18 | Հագուստ տուրիստական | | 1 փաթեթ | 3 | 500 |
| 19 | Տուրիստական կողմնացույց "ЙОШКАРЛА" | 1 | 10 | 3 | 1000 |
| 20 | Գունավոր անձրևանոցներ | | 22 | 5 | 440 |
| 21 | Տուրիստական կոշիկներ | | 2 զույգ | 2 | 3000 |
| 22 | Տուրիստական սպորտային կոշիկներ | | 3 զույգ | 3 | 4500 |
| 23 | Գուլպաներ | | 3 զույգ | 0.5 | 150 |
| 24 | Մանկական փափուկ խաղալիքներ | | | 2 | 100 |
| | **Ընդամենը** | 4 | | **109** | **37190** |

Վարչատնտեսական բաժնի պետ՝

Պողոսյան Կամո

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 581 - Ա**

**քաղ. Երևան**

**«ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ - ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՍՊԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 10-ի N 01.1/14-2/12375-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 7-ի N ՆՁ/22.2/8646-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 6-ի N 06/3-8/22982-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաբկիր» բժշկական համալիր – երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ-ի հասցեով ուղարկված դեղորայքի (Կուստադիոլ 1000 մլ 10 ինֆուզիոն պարկ, ATG 100մգ 10 շշիկ, 3,510 եվրո արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Արաբկիր» բժշկական համալիր – երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտին՝ բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում, սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 582 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-488-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 4-ի N 01.1/14-2/12103-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 3-ի N 06/3-8/22647-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 24-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բազմազավակ քանյոթ ընտանիքների համար կառուցվող առանձնատների ամբողջական կահավորում» ծրագրի մասին» N Մ-488-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «մինչև 2017 թվականի հունիսի 1-ը» բառերը փոխարինել «մինչև 2017 թվականի դեկտեմբերի 29-ը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 583 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ԿՈՄԻՏԵ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 12-ի N 01.1/14-2/12628-17, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի հուլիսի 11-ի N 1/06/855-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 12-ի N 06/3-8/24202-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի քաղաքացի Անդրե Սայրիմի կողմից «Հայաստանի Ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպության հասցեով ստացված պարակայակի (հատուկ մարզական նավակ հաշմանդամություն ունեցող մարզիկների համար, 17 կգ ընդհանուր քաշով, 1000 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 467,700 դրամ, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի Ազգային պարալիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15-1/16540-17
19.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 հուլիսի 2017 թվականի N Մ- 584 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հուլիսի 14-ին)
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N Մ-574-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի 2017 թվականի հուլիսի 11-ի N 017/054 և հուլիսի 17-ի N 017/057 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 10-ի «Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-574-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «396,009.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը» բառերը փոխարինել «401,109.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից 5,100 ԱՄՆ-ի դոլար կազմում են փոխադրման ծախսերը» բառերով.

2) որոշմանը կից բեռի բաշխման ցանկը կարդալ հետևյալ շարադրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

9/6 2

**MRKU 1007702/MSKU 6963723 բեռի բաշխման ցանկ**

| Ապրանքի նկարագիրը | Քանակ | Չափի միավոր | Ստացողի լրիվ անվանումը | Բեռի ստացման իրական շահառուն | Արժեք ԱՄՆ $ | Տեղափոխման արժեք ԱՄՆ $ |
|---|---|---|---|---|---|---|
| Հողաթափ | 20 010 | Զույգ | «Մեծն Ներսես» ԲՀԿ, ք Երևան Կորյունի 6 ա, բն 1 , ՀՎՀՀ 01513853 | ՀՀ սահմանամերձ համայնքների դպրոցները, մանկատները | 113 656.80 | 1 463.73 |
| Հողաթափ | 5 500 | Զույգ | Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ, ք Երևան 0019, Մ Բաղրամյան 18 2 ՀՎՀՀ 00032803 | ՀՀ սահմնամերձ համայնքները, դպրոցները, մանկապարտեզները | 31 240.00 | 402.32 |
| Հողաթափ | 44 210 | Զույգ | Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ, ք Երևան, Խորենացի 22, ՀՎՀՀ 02517115 | ՀՕՖ-ի սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ծրագրերի շահառուները | 251 112.80 | 3 233.95 |
| **Ընդամենը** | **69 720** | | | | **396 009.6** | **5 100** |

Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն՝ Բ Սարգսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 585 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 29-ի N 01.1/14-2/11726-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 28-ի N 06/3-8/22056-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայից անհատ բարերար Աշոտ Թունյանի կողմից, արևային ջրատաքացուցիչների կայանի համար, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ստացված ջերմային փոխարկիչի (253 կգ ընդհանուր քաշով, 2,461 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 586 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 29-ի N 01.1/14-211775/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 30-ի N 06/3-8/22378-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Արաբական Միացյալ Էմիրությունից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իբրև նմուշ ձեռք բերված աղանդերի, սուրճի և թեյի (34 կգ ընդհանուր քաշով, 520 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,836 դիրհամ, «Արևմտյան» մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 587 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1310-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 01.1/14-2/12173-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 3-ի N 06/3-8/22648-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2013 թվականի դեկտեմբերի 27-ի «Մայրի» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Սոցիալական ինտեգրման կենտրոնի սեղծում» N Մ-1310-Ա (2014 թվականի մարտի 14-ի Մ-197-Ա 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-999-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-122-Ա, մարտի 18-ի N Մ-263-Ա, դեկտեմբերի 4-ի N Մ-1267-Ա, 2016 թվականի նոյեմբերի 14-ի Մ-1074-Ա և դեկտեմբերի 23-ի Մ-1205-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01829451) 2017 թվականի հունիսի 29-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երկու հատ օդորակիչի մատակարարում՝ 565,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հուլիսի 2017 թվականի N Մ- 588 - Ա

քաղ. Երևան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-026-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 10-ի N 01.1/14-2/12381-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 7-ի N 06/3-8/23265-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի մասին» N Մ-026-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռք բերում՝ 670,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 589 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-528-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 10-ի N 01.1/14-2/12382-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 7-ի N 06/3-8/23263-16 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կո՛ղմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-528-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռք բերում՝ 670,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 590 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 01.1/14-2/12174-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 3-ի N 06/3-8/22650-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռք բերում՝ 2,050,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**17 հուլիսի 2017 թվականի N Մ- 591 - Ա**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի հուլիսի 14-ին)
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի N 01.1/14-2/12956-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի 14-ի N 02/14/12222-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/24517-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 8,807,540 դրամ արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Միհրշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930335) 2017 թվականի հունիսի 21-ին կնքված՝ N 09Շ/017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ամրացման և վերականգման աշխատանքների իրականացում՝ 8,807,540 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
07 հուլիս 2017թ.

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի բարեկարգում

## Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի ներսում գտնվող Հին սեղանատան արևմտյան ճակատի խարխլված պատի ամրացման և վերականգման աշխատանքները, որոնք համաձայնեցված են Մշակույթի նախարարության հետ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, եկեղեցաշինական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 8.807.540 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, միաբանությունը և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 21 հունիս, 2017 – 01 նոյեմբեր, 2017թ.: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքի ներսում գտնվող Հին սեղանատան արևմտյան ճակատի խարխլված պատի ամրացման և վերականգման աշխատանքներ, որի գումարը կազմում է 8.807.540 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Միհրշին » ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Նորք-Մարաշ 17 փողոց, ՀվՀՀ 00930335 ), պայմանագիր կնքված 21.06.2017թ. 09Շ/ 017: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 21 հունիս, 2017 – 01 նոյեմբեր, 2017թ. : |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում գտնվող Հին սեղանատան արևմտյան ճակատի խարխլված պատի ամրացում , որի գումարը կազմում է 8.807.540 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Մշակույթի նախարարության և Էջմիածնի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Ճարտարապետական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 հուլիսի 2017 թվականի N Մ- 592 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-903-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի Ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 01.1/14-2/12757-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/24404-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից ձեռք բերված սարքավորումները (12,558 կգ ընդհանուր քաշով, 162,931 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, բեռի ցանկը կցվում է, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 30-ի «Հայաստանի Ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Գինեգործական կրթության գիտահետազոտական բաղադրիչի զարգացում» ծրագրի մասին» N Մ-903-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Նորարարությունների մրցակցային հիմնադրամի (ՆՄՀ) և Հայաստանի ազգային ագրարային համալսարան (ՀԱԱՀ) հիմնադրամի միջև իրականացվող «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագրի շրջանակներում ներմուծվող սարքավորումների ցանկ

| Հ/հ | Անվանում | Քանակ | Միավորի Արժեք | Ընդհանուր |
|---|---|---|---|---|
| 1 | Հորիզոնական ջարդիչ- չանչազատիչ խաղողի մշակման համար | 1 հատ | €6,900 | €6,900 |
| 2 | Շնեկավոր պոմպ ջարդած խաղողի համար, արտադ.՝ 6-7մ³/ժ | 1 հատ | €3,900 | €3,900 |
| 3 | Պնևմատիկ մեմբրանային մամլիչ (բաց տեսակի) | 1 հատ | €25,350 | €25,350 |
| 4 | Կենտրոնախույս պոմպ ճկուն սկավառակով NBR | 2 հատ | €2.750 | €5,500 |
| 5 | Կենտրոնական սառեցնող համակարգ՝ կենտրոնախույս պոմպը ներառյալ | 1 հատ | €19,720 | €19,720 |
| 6 | Ստվարաթղթյա ֆիլտր 400x400 | 1 հատ | € 3,330 | € 3,330 |
| 7 | Համակարգ միկրոֆիլտրացիայի համար | 1 հատ | € 4,050 | € 4,050 |
| 8 | Խմորման պահաման կարմիր գինու համար – V 50հլ | 4 հատ | € 4,750 | € 19,000 |
| 9 | Խմորման պահաման սպիտակ գինու համար / V 145 հլ | 1 հատ | € 6,250 | € 6,250 |
| 10 | Խմորման պահաման սպիտակ գինու համար – V 112 հլ | 3 հատ | € 5,700 | € 17,100 |
| 11 | Խմորման պահաման սպիտակ գինու համար –V 57 հլ | 3 հատ | € 3,800 | € 11,400 |
| 12 | Խմորման պահաման սպիտակ գինու համար –V 38 հլ | 4 հատ | € 3250 | € 13,000 |
| 13 | Խմորման պահաման սպիտակ գինու համար – V 12 հլ | 2 հատ | € 2,850 | € 5,700 |
| 14 | Գինու և քաղցույի տեղափոխման համար աքսեսուարների հավաքածու, | 1 հավաքածու | € 2,591 | € 2,591 |
| 15 | MIX-E-R 037/4 գինու խառնիչ, պատրաստված չժանգոտող պողպատից | 1 հատ | € 1,900 | € 1,900 |
| 16 | Պահեստամասեր պոմպերի և մյուս սարքավորումների համար (սկավառակներ, ստատորներ, խամուտներ և այլն) | 1 հավաքածու | € 1,500 | € 1,500 |
| 17 | Խողովակաշար ՉԺՊ D.32,շշալցման արտադրամաս գինի տեղափոխելու համար | 1 հավաքածու | € 610 | € 610 |
| 18 | Կիսաավտոմատ ցայող մեքենա 4 կայանով | 1 հատ | € 2,880 | € 2,880 |
| 19 | Լցնող և խցանող սարք | 1 հատ | € 7,900 | € 7,900 |
| 20 | Պիտակավորման մեքենա 2 կայանով | 1 հատ | € 4,350 | € 4,350 |
| Ընդհանուր | | | | €162,931 |

Հայտում ներկայացված «Ռետինե խողովակներ», «Խողովակներ և հավելումներ» անվանումները ցանկում ներկայացված են ավելի մանրամասն՝ 14, 16 և 17 կետերով:

Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի [illegible] — Վ. Մելքոնյան

Գլխավոր հաշվապահ — Օ. Բավինա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 593 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 11-ի N 01.1/14-2/12501-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 12-ի N 06/3-8/24199-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2017 թվականի հուլիսի 4-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա և դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «սկիզբը՝ 2014թ. սեպտեմբեր 15, ավարտը՝ 2017թ. սեպտեմբերի 31, տևողությունը՝ 36 ամիս» բառերը փոխարինել «սկիզբը՝ 2014թ. սեպտեմբեր 15, ավարտը՝ 2019թ. դեկտեմբերի 31» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետում «2017թ. սեպտեմբերի» բառերը փոխարինել «2019թ. դեկտեմբերին» բառերով:

2. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ավտոմեքենան (Mercedes-Benz Sprinter 313 CDI, 2009 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ WDB9066351S389102, 12,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ,



փոխադրման ծախսերը կազմել են 10,000 դրամ, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Մ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 594 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N Մ-529-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի -ի N 01.1/80-2/-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի -ի N 06/3-8/-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 30-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Հայաստանի չորս մարզերում սննդային աջակցություն» ծրագրի մասին» N Մ-529-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2017 թվականի հուլիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի ձեռք բերում՝ 428,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 595 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N Մ-490-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Երևան իմ սեր» հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 3-ի N 07/14-2/11929-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 12-ի N 06/3-8/24198-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Երևան իմ սեր» հիմնադրամի 2017 թվականի հունիսի 22-ի գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 17-ի «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-490-Ա որոշման մեջ (2013 թվականի ապրիլի 23-ի N Մ-253-Ա, հոկտեմբերի 25-ի N Մ-963-Ա, 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-622-Ա և 2016 թվականի մարտի 18 N Մ-186-Ա որոշումների խմբագրությամբ) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1,516,624,000 դրամ» բառերը փոխարինել «1,818,054,000 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00100778) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01557589) 2017 թվականի հունիսի 14-ին կնքված՝ N 119 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Toyota LC200 4,6L GAS ավտոմեքենայի ձեռք բերում՝ 33,430,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Երևան իմ սեր» հիմնադրամի տնօրեն
Արշակ Կարապետյան

«06» հուլիսի 2017թ.

«Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում»
ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Երևան իմ սեր» հիմնադրամին հանգանակված միջոցներով Երևան քաղաքում՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ և Սուրբ Սարգիս եկեղեցիներին հարակից տարածքներում վերստեղծել հին Երևանի ճարտարապետությանը բնորոշ ոճով, մոտ 2100 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր: Շենքերում գործելու են մանկական գեղագիտական կենտրոն, համայնքային, միայնակ մայրերի և երեխաների կենտրոններ՝ իրականցվելու են հոգևոր, սոցիալ մշակութային ծրագրեր: Կառուցված շենքերը և դրանց կառուցման համար ձեռք բերված հողամասերը նվիրաբերվելու են Հայաստանյայց առաքելական եկեղեցուն:<br><br>Նախատեսվում է ամբողջովին վերականգնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մայր Տաճարի տարածքին հարող մոտ 3000 քմ ընդհանուր մակերեսով քաղաքային այգին և կառուցել մանկական կենտրոն՝ երեխաների համար այգեգործական, այգեշինական, լանդշաֆթային դիզայնի, խոհարարական և սպասարկման ծրագրերով ուսուցման կազմակերպման համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից օգտվելը |
| 3. | Բարեգործը | «Երևան իմ սեր» հիմնադրամ |



| | | |
|---|---|---|
| 4. | Ծրագիրը կատարողը | «Երևան իմ սեր» հիմնադրամ, ՀՎՀՀ 00100778<br><br>Ք. Երևան, Եկմալյան 6, Հեռ.՝ (+37491) 23 04 00 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կոնդ թաղամաս՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից տարածք և ք. Երևան. «Ձորագյուղ ազգագրական թաղամաս»՝ Սուրբ. Սարգիս եկեղեցուն հարակից տարածք<br><br>Հայաստանի Հանրապետություն, ք. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Մայր Տաճարին հարակից տարածք<br><br>Ծրագիրն ընդգրկում է կրթական, մշակութային սոցիալական բնագավառները |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է մոտ 1,818,054,000 (մեկ միլիարդ ութ հարյուր տասնութ միլիոն հիսունչորս հազար) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են Հայաստանյայց առաքելական եկեղեցին, Երևանի և Էջմիածնի կարիքավոր ընտանիքների երեխաները, միայնակ մայրերն ու նրանց երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը սկսվել է 2013թ. մարտի 25-ին և նախատեսվում է ավարտել մինչև 2019 թ. դեկտեմբերի 25 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրով նախատեսվում է կառուցել մոտ 2100 քմ ընդհանուր մակերեսով ցածրահարկ շենքեր Երևան քաղաքի Պարոնյան և Կոզեռն փողոցների միջև ընկած տարածքում՝ Սուրբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հարևանությամբ և Երևան քաղաքի «Ձորագյուղ ազգագրական թաղամասում»՝ Իսրաելյան փողոցի և Հրազդանի ձորի միջև ընկած տարածքում: Սուրբ. Սարգիս եկեղեցու հարակից տարածքում՝ կառուցվելու է մանկական գեղագիտական կենտրոն համալիր, որտեղ գործելու են նկարչության ստուդիա, կավագործության ստուդիա, էրգոթերապիայի, հոգեբանական և լոգոպեդիկ թերապիաների սենյակներ, (595 քմ և մոտ 250 քմ օժանդակ [illegible]), |

| | | |
|---|---|---|
| | | համակարգչային կենտրոն, գրադարան, տեխնիկական մոդելավորման կենտրոններ (մոտ 590 քմ), վարչական մասնաշենք (մոտ 108 քմ) կառուցվելու է նաև բացօթյա ամֆիթատրոն, ստեղծվելու է անգլիական ոճի այգի:<br><br>Սուրբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից կառուցվող շենքը հանդիսանալու է Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն օժանդակ շինություն՝ անվճար հատկացվելու է Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու հոգևոր սպասավորների և համայնքի հոգևոր կարիքների համար (մոտ 500 քմ):<br><br>Կառուցվելիք շենքի շուրջ նախատեսվում է իրականացնել ծառատնկման և կանաչապատման աշխատանքներ, որպեսզի կառուցվելիք շենքերը Սուրբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու և միմյանց հետ միասին ունենան միասնական համալիրի տեսք և ծառայեն համայնքի հոգևոր-մշակութային պահանջներին:<br><br>Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մայր Տաճարի տարածքին հարող մոտ 3000 քմ ընդհանուր մակերեսով քաղաքային այգին ամբողջովին վերականգնվելու անգլիական «Ռենդլ Սիդլի Ասոշիեյթս» ընկերության կոնցեպտուալ նախագծի հիման վրա: Վերականգնվելու են կանաչ տարածքները, կառուցվելու են նոր ծառուղիներ, ջրամատակարարման և լուսավորության նոր համակարգեր: Այգուն հարակից՝ նախկինում եղած սննդի օբյեկտի տարածքում կառուցել մանկական կենտրոն՝ երեխաների համար այգեգործական, այգեշինական, լանդշաֆտային դիզայնի, խոհարարական և սպասարկման ծրագրերով ուսուցման կազմակերպման համար:<br><br>Աշխատանքներն ընթանալու են հետևյալ փուլերով<br><br>ա) ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2013 հունվար – 2019 մայիս ամիսների ընթացքում) – մոտ 80,000,000 ՀՀ դրամ |



| | | |
|---|---|---|
| | | բ) Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից հողամասերի փոխանցում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (2014թ. մայիս – հուլիս ամիսների ընթացքում) 516,624,000 ՀՀ դրամ<br><br>գ) ընդհանուր շինարարության և արտաքին բարեկարգման աշխատանքները (2013 մարտ - 2019 դեկտեմբեր ամիսների ընթացքում) մոտ 1,188,000,000 ՀՀ դրամ<br><br>Ավտոմեքենա՝ 33,430,000 ՀՀ դրամ:<br><br>Նախագծի շրջանակներում 01.06.2017թ դրությամբ կատարված աշխատանքների արժեքը.<br><br>ա) ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծման աշխատանքներ, արժեքը՝ 63,848,000 ՀՀ դրամ<br><br>բ) Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն են փոխանցվել Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն հարակից հողամասերը՝ 516,624,000 ՀՀ դրամ<br><br>գ) ընդհանուր շինարարության և արտաքին բարեկարգման աշխատանքներ, արժեքը՝ 622,917,338 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ձեռք բերել ներքոհիշյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմելու է 1,266,430,000 ՀՀ դրամ:<br><br>• Ճարտարապետական նախագծերի՝ կառուցվելիք շենքերի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի նախագծում – մոտ 80,000,000 ՀՀ դրամ:<br>• Շինարարական ընկերությունների հետ կնքվելիք պայմանագրի շրջանակներում նախատեսվող հողային, շինարարական աշխատանքներ և արտաքին բարեկարգում– մոտ 945,000,000 ՀՀ դրամ:<br>• Շինանյութերի և ներքին հարդարման և կահավորանքի ներմուծում– մոտ 200,000,000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | | • Էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և ջրահեռացման, գազի մատակարարման և այլ համակարգերին միացման աշխատանքներ – մոտ 43,000,000 ՀՀ դրամ<br>• Ավտոմեքենա՝ 33,430,000 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ավտոմեքենա՝ 33,430,000 ՀՀ դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարան<br><br>Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | • Սահմանված կարգով եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով<br>• աշխատանքային ու ֆինանսական հաշվետվությունների ներկայացում «Երևան իմ սեր» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 596 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N Մ-441-Ա ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐՆԱԳՐՈՒՄ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(«Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիա)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի 2017 թվականի հուլիսի 13-ի N 03/0544 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի հասցեով ստացված ավտոմեքենայի և պահեստամասերի ներմուծման ծրագրի մասին» N Մ-441-Ա որոշման վերնագրում և որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի հասցեով ստացված ավտոմեքենայի և պահեստամասերի ներմուծման ծրագրի մասին» բառերը փոխարինել «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի հասցեով ստացված ավտոմեքենայի ներմուծման ծրագրի մասին» բառերով.

2) որոշման 1-ին կետում «Toyota Highlander մակնիշի մարդատար ավտոմեքենայի և պահեստամասերի (նույնականացման համարը՝ STDZARFN6FS009832, 25,360 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2,450 ԱՄՆ-ի դոլար, ԱՄ ՄՁՄ ՄՏ և «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը» բառերը փոխարինել «Toyota Highlander մակնիշի մարդատար ավտոմեքենայի (նույնականացման համարը՝ STDZARFN6FS009832, 25,000 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 2,450 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Վ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 597 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՍՈԱՐ) - ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՏՈՒԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 10-ի N 01.1/14-2/12379-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի հուլիսի 11-ի N 02/14/11889-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 6-ի N ՆՁ/22.2/8548-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի հուլիսի 12-ի ԱԱՄ/ԱնՄ-2-1/7306-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 10-ի N 06/3-8/23495-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Թբիլիսյան խճուղի 19, շենք 58, բն. 1, ՀՎՀՀ՝ 00148272) իրականացվող՝ 322,683.31 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ «Հատուկ սարքավորումների, պարագաների տրամադրում երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված հատուկ սարքավորումները և պարագաները (7,300 կգ, 316,458.31 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 6,225 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Առաջարկել «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամին սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՂԵԿԱՎԱՐ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**

**Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ) - Հայաստան , Երևան**

**Բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն**

**Հ. Մուրադյանի կողմից**

**01 հուլիսի 2017 թ.**

**ԾՐԱԳԻՐ**

**Հատուկ սարքավորումների, պարագաների տրամադրում ՀՀ երեխաների խնամքի եվ պաշտպանության հաստատություններին**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տրամադրել հատուկ սարքավորումներ, պարագաներ երեխաների խնամքի և պաշտպանության հաստատություններին /տես կից ցանկը/<br>1. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ<br>2. «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ<br>3. «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության ճամբար<br>4. «Զորակ» Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային և մաքսային արտոնություններից : |
| 3. | Բարեգործը | «Հայաստան-Արցախ» հիմնադրամ,<br>117 South Lourse St. 315 , Glendale , CA 91202, USA |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն ՍՕԱՐ (SOAR)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ (ք. Երևան, Քանաքեռ Զեյթուն Թբիլիսյան խճ. 19) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստան, սոցիալական , առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 322,683.31 ԱՄՆ-ի դոլար / Երեք հարյուր քսաներկու հազար վեց հարյուր ութսուն[illegible] երեսունմեկ ցենտ / |
| 7. | Ստացողները | 1. «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ<br>2. «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ |



| | | |
|---|---|---|
| | | 3. «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության ճամբար<br>4. «Զորակ» Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն |
| 8. | Ծրագրի իրակնացման տևողությունը | 2017թվականի հուլիսի 1-ից մինչև հոկտեմբերի 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Երեխաների խնամքի կազմակերպման համար հատուկ սարքավորումների, պարագաների ներմուծում և մաքսային ձևակերպում (7,300 կգ, 316,458.31 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 6,225 ԱՄՆ-ի դոլար) – մինչև 2017 թվականի օգոստոսի 1-ը<br>Բեռի բաշխում ստացողներին – մինչև հոկտեմբերի 30-ը |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը | Երեխաների խնամքի կազմակերպման համար հատուկ սարքավորումների, պարագաների ներմուծում և մաքսային ձևակերպում (7,300 կգ, 316,458.31 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 6,225 ԱՄՆ-ի դոլար)<br>Բեռի բաշխում ստացողներին |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերչպական ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է բարեգործի կողմից, ինչպես նաև սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին կներկայացվի հաշվետվություն |

# Բեռի ընդհանուր ցանկ

| Նկարագրություն | Հատ / տուփ | Միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|
| Հոսանքափոխարկիչ 200 վտ. | 1 | 25.00 | 25.00 |
| Ձեռնոցներ , Ոչ ստերիլ | 60 | 582.04 | 34,944.00 |
| Ակնոցներ, դիմակներ և դիմակներ դեմքի պաշտպանության | 24 | 2,336.08 | 56,083.20 |
| 2x2, 4x4 Ստերիլ զոնդեր վիրակապի համար | 5 | 55.462 | 277.31 |
| Կպչուն ժապավեններ վնասվածքի համար / band aids | 5 | 978.06 | 4,893.00 |
| Բժշկական գործողության , միջամտության համար նախատեսված ստերիլ միջոցներ, սկուտեղներ, վերքի մշակման միջոցներ | 5 | 126.096 | 630.48 |
| Մասնագիտական վիրակապեր և ուրիշ այլ վիրակապեր , որոնք չեն դասակարգվում | 5 | 716.69 | 3,583.45 |
|  կոնք անվասայլակի համար | 10 | 125.00 | 1,250.00 |
| C.U.R.E. Ֆիրմայի անձնական հիգիենայի հավաքածուներ երեխաների համար | 200 | 350.00 | 7,000.00 |
| Ֆիզիկական թերապիայի սարք | 5 | 200.00 | 1,000.00 |
| Փոքր սառնարան Օգտագործվում է 200 Վտ հոսանքափոխարկիչով | 1 | 225.00 | 225.00 |

| | | | |
|---|---|---|---|
|  Կանգնակ, Կանգնելու օգնության դասընթացավար | 19 | 1,500.00 | 28,500.00 |
|  Կանգնակ Սեղանով | 5 | 900.00 | 4,500.00 |
| Շարժական , թեքվող սեղան ֆիզիոթերապիայի համար | 5 | 3,970.00 | 19,850.00 |
| Ծալովի քայլասայլակ | 25 | 70.00 | 1,750.00 |
| Մանկական նորածնային քայլակ | 3 | 57.00 | 171.00 |
| Մանկական անվասայլակ | 6 | 353.33 | 2,120.00 |
| Սայլակ հատուկ կարիքներ կամ ձգվելու խնդիր ունեցողների համար | 11 | 4,000.00 | 44,000.00 |
| Անվասայլակ չափահասների համար | 5 | 1,600.00 | 8,000.00 |
| Մոմեր, Գրասենյակային պարագաներ | 5 | 300.00 | 1,500.00 |
| Մանկական հեծանիվ | 2 | 25.00 | 50.00 |
| Գրասեղան | 2 | 10.00 | 20.00 |
| Պահարան - սեղան | 1 | 50.00 | 50.00 |
| Գործվածք - կտոր | 1 | 250.00 | 250.00 |
| Գործվածքի գլանափաթեթ | 1 | 250.00 | 250.00 |
| Նոր գործվածքներ | 1 | 500.00 | 500.00 |
| Պայուսակներ 26 հատ | 1 | 200.00 | 200.00 |
| Նոր վերնաշապիկներ, սվիտերներ | 7 | 385.7 | 2,700.00 |
| Մանկական սայլակ | 6 | 267.00 | 1,600.00 |
| Գորգ - վարդագույն | 1 | 200.00 | 200.00 |
| Գորգ - 4 գլանափաթեթ | 1 | 4,000.00. | 4,000.00 |
| Գորգեր – 5,5 | 1 | 2,100.00 | 2,100.00 |
| Գորգեր – բրդյա -40 | 1 | 2,400.00 | 2,400.00 |

9/3

9/3

| | | | |
|---|---|---|---|
| Գորգեր – բրդյա -8 | 1 | 750.00 | 750.00 |
| Համակարգչի փոքր սեղան | 1 | 20.00 | 20.00 |
| Հեռուստացույցի տակդիր | 1 | 20.00 | 20.00 |
| Տակդիրներ մեծահասակների | 40 | 102.312 | 4,092.48 |
| Հիվանդի խնամքի պարագաներ / օճառներ, շամպուններ, բերանի խոռոչի ողողիչ, ատամի մածուկ, պայուսակ վերոնշյալ պարագաների համար /,հողաթափեր | 40 | 319.71 | 12,788.49 |
| Մեկանգամյա օգտագործման տակը փոխելու պոլիէթիլենային կապույտ սավան | 265 | 7.322 | 1,940.40 |
| Մեզի տոպրակներ և պարագաներ | 20 | 943.833 | 18,876.66 |
| Մեզի կատետրներ, սկուտեղ | 102 | 424.978 | 43,347.84 |
| **Ընդամենը** | | | **316,458.31** |

Բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6,225 ԱՄՆ-ի դոլար

## Խարբերդի մասնագիտացված մանկատուն ՊՈԱԿ

| Նկարագրություն | Հատ/ տուփ | Միավորի արժեք ԱՄՆ դոլլար | Ընդամենը ԱՄՆ դոլլար |
|---|---|---|---|
| Ձեռնոցներ , Ոչ ստերիլ | 20 | 582.04 | 11,640.80 |
| 2x2, 4x4 Ստերիլ զոնդեր վիրակապի համար | 2 | 55.462 | 110.924 |
| Կպչուն ժապավեններ վնասվածքի համար / band aids | 2 | 978.06 | 1,956.12 |
| Բժշկական գործողության համար նախատեսված ստերիլ միջոցներ, սկուտեղներ, վերքի մշակման միջոցներ | 5 | 126.096 | 630.48 |
|  Կոնք անվասայլակի համար | 5 | 125.00 | 625.00 |
| Ֆիզիկական թերապիայի սարք | 3 | 200.00 | 600.00 |
| Փոքր սառնարան Օգտագործվում է 200 Վտ հոսանքափոխարկիչով | 1 | 225.00 | 225.00 |
|  Կանգնակ, Կանգնելու օգնության դասընթացավար | 10 | 1,500.00 | 15,000.00 |

| | | | |
|---|---|---|---|
|  Կանգնակ Սեղանով | 3 | 900.00 | 2,700.00 |
| Շարժական , թեքվող սեղան թերապիայի համար | 5 | 3,970.00 | 19,850.00 |
| Մանկական անվասայլակ | 2 | 353.33 | 706.66 |
| Տակդիրներ մեծահասակների | 10 | 102.312 | 1,023.12 |
| Մեկանգամյա օգտագործման տակը փոխելու պոլիէթիլենային կապույտ սավան | 100 | 7.322 | 732.2 |
| Հոսանքափոխարկիչ 200 վտ. | 1 | 25.00 | 25.00 |
| Մասնագիտական վիրակապեր և ուրիշ այլ վիրակապեր , որոնք չեն դասակարգվում | 5 | 716.69 | 3,583.45 |
| Ծալովի քայլասայլակ | 10 | 70.00 | 700.00 |
| Սայլակ հատուկ կարիքներ կամ ձգվելու խնդիր ունեցողների համար | 7 | 4,000.00 | 28,000.00 |
| Անվասայլակ չափահասների համար | 2 | 1,600.00 | 3,200.00 |
| Մեզի տոպրակներ և պարագաներ | 10 | 943.833 | 9,438.33 |
| Մեզի կատետրներ, սկուտեղ | 80 | 424.978 | 33,998.24 |
| Ակնոցներ, դիմակներ և դիմակներ դեմքի պաշտպանության | 6 | 2,336.08 | 14,016.48 |
| Մանկական սայլակ | 2 | 267.00 | 534.00 |
| Ընդամենը | | | 149,295.804 |

## ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ անվան մանկատուն ՊՈԱԿ

| Նկարագրություն | Հատ/ տուփ | Միավորի արժեք ԱՄՆ դոլլար | Ընդամենը ԱՄՆ դոլլար |
|---|---|---|---|
| Ձեռնոցներ , Ոչ ստերիլ | 15 | 582.04 | 8,730.6 |
| 2x2, 4x4 Ստերիլ զոնդեր վիրակապի համար | 1 | 55.462 | 55.462 |
| Կպչուն ժապավեններ վնասվածքի համար / band aids | 1 | 978.06 | 978.06 |
| Ֆիզիկական թերապիայի սարք | 1 | 200.00 | 200.00 |
|  Կանգնակ, Կանգնելու օգնության դասընթացավար | 4 | 1,500.00 | 6,000.00 |
|  Կանգնակ Սեղանով | 1 | 900.00 | 900.00 |
| Մանկական նորածնային քայլակ | 3 | 57.00 | 171.00 |
| Մանկական անվասայլակ | 2 | 353.33 | 706.66 |
| Մեկանգամյա օգտագործման տակը փոխելու պոլիէթիլենային կապույտ սավան | 145 | 7.322 | 1,061.69 |
| Ակնոցներ, դիմակներ և դիմակներ դեմքի պաշտպանության | 6 | 2,336.08 | 14,016.48 |
| Ծալովի քայլասայլակ | 10 | 70.00 | 700.00 |
| Սայլակ հատուկ կարիքներ կամ ձգվելու խնդիր ունեցողների համար | 4 | 4,000.00 | 16,000.00 |
| Մանկական հենակ | 1 | 25.00 | 25.00 |
| Մանկական սայլակ | 2 | 267.00 | 534.00 |
| Մեզի տոպրակներ և պարագաներ | 5 | 943.833 | 4,719.165 |

| | | | |
|---|---|---|---|
| Մեզի կատետրներ, սկուտեղ | 9 | 424.978 | 3,824.802 |
| Ընդամենը | | | **58,622.919** |

# "ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ" ՃԱՄԲԱՐ

| Նկարագրություն | Հատ / տուփ | Միավորի արժեքը ԱՄՆ դոլլար | Ընդամենը ԱՄՆ դոլլար |
|---|---|---|---|
| Ձեռնոցներ , Ոչ ստերիլ | | | |
| 2x2, 4x4 Ստերիլ զոնդեր վիրակապի համար | 10 | 582.04 | 5,820.4 |
| Կպչուն ժապավեններ վնասվածքի համար / band aids | 1 | 55.462 | 55.462 |
| C.U.R.E. Ֆիրմայի անձնական հիգիենայի հավաքածուներ երեխաների համար | 1 | 978.06 | 978.06 |
| | 200 | 350.00 | 7,000.00 |
| Պայուսակներ 26 հատ | | | |
| Նոր վերնաշապիկներ, սվիտերներ | 1 | 200.00 | 200.00 |
| Մանկական սայլակ | 7 | 358.7 | 2,510.9 |
| Հիվանդի խնամքի պարագաներ / օձառներ, շամպուներ, բերանի խոռոչի ողողիչ, ատամի մածուկ, պայուսակ վերոնշյալ պարագաների համար /,հողաթափեր | 2 | 267.00 | 534.00 |
| | 40 | 319.71 | 12,788.4 |
| Ակնոցներ, դիմակներ և դիմակներ դեմքի պաշտպանության | | | |
| Մոմեր, Գրասենյակային պարագաներ | 6 | 2,336.08 | 14,016.48 |
| Մանկական հեծանիվ | 5 | 300.00 | 1,500.00 |
| Գրասեղան | 1 | 25.00 | 25.00 |
| Պահարան - սեղան | 2 | 10.00 | 20.00 |
| Գործվածք - կտոր | 1 | 50.00 | 50.00 |
| Գործվածքի գլանափաթեթ | 1 | 250.00 | 250.00 |
| Նոր գործվածքներ | 1 | 250.00 | 250.00 |
| Գորգ - վարդագույն | 1 | 500.00 | 500.00 |
| Գորգ - 4 գլանափաթեթ | 1 | 200.00 | 200.00 |
| Գորգեր – 5,5 | 1 | 4,000.00. | 4,000.00 |
| Գորգեր – բրդյա -40 | 1 | 2,100.00 | 2,100.00 |
| | 1 | 2,400.00 | 2,400.00 |

| | | | |
|---|---|---|---|
| Գորգեր – բրդյա -8 | | | |
| Համակարգչի փոքր սեղան | 1 | 750.00 | 750.00 |
| Հեռուստացույցի տակդիր | 1 | 20.00 | 20.00 |
| Մանկական անվասայլակ | 1 | 20.00 | 20.00 |
| | 2 | 467.802 | 935.604 |
| Ընդամենը | | | 56,924.306 |

<u>Զորակ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն</u>

| Նկարագրություն | Հատ/ տուփ | Միավորի արժեք ԱՄՆ դոլլար | Ընդամենը ԱՄՆ դոլլար |
|---|---|---|---|
| Ձեռնոցներ , Ոչ ստերիլ | | | |
| 2x2, 4x4 Ստերիլ զոնդեր վիրակապի համար | 15 | 582.04 | 8,730.6 |
| Կպչուն ժապավեններ վնասվածքի համար / band aids | 1 | 55.462 | 55.462 |
| | 1 | 978.06 | 978.06 |
|  կոնք անվասայլակի համար | 5 | 125.00 | 625.00 |
| Ֆիզիկական թերապիայի սարք | | | |
| | 1 | 200.00 | 200.00 |
|  Կանգնակ, Կանգնելու օգնության դասընթացավար | 5 | 1,500.00 | 7,500.00 |
|  Կանգնակ Սեղանով | 1 | 900.00 | 900.00 |
| Տակդիրներ մեծահասակների | | | |
| Մեկանգամյա օգտագործման տակը փոխելու պոլիէթիլենային կապույտ սավան | 30 | 102.312 | 3,069.36 |
| Ծալովի քայլասայլակ | 20 | 7.322 | 146.44 |
| Մեզի տոպրակներ և պարագաներ | 5 | 70.00 | 350.00 |
| | 5 | 943.833 | 4,719.165 |

| | | | |
|---|---|---|---|
| Մեզի կատետրներ, սկուտեղ | 13 | 424.978 | 5,524.714 |
| Անվասայլակ չափահասների համար | 3 | 1,600.00 | 4,800.00 |
| Ակնոցներ, դիմակներ և դիմակներ դեմքի պաշտպանության | 6 | 2,336.08 | 14,016.48 |
| Ընդամենը | | | 51,615.281 |

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ * КОМИССИЯ ПРАВИТЕЛЬСТВА РА ПО КООРДИНАЦИИ БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ПРОГРАММ * CHARITABLE PROGRAMS COORDINATING COMMISSION OF THE GOVERNMENT OF RA * 02380251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 598 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 11-ի N 07/80-2/12605-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 11-ի N 06/3-8/23869-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից.ձեռք բերված՝ հաշմանդամների համար նախատեսված մեկ ավտոմեքենայի (2006 թվականի արտադրության CHRYSLER TOWN AND COUTRY TOURING մակնիշի, նույնականացման համարը՝ 2A4GP54L36R629739, 1,950 կգ քաշով, 4,200 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1,750 ԱՄՆ-ի դոլար, Արարատյան մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Ավտոմեքենան նախատեսված է անհատույց հանձնելու 1993 թվականին մարտական գործողությունների ժամանակ վիրավորված 1-ին խմբի հաշմանդամ՝ Չատյան Շուշիկին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 599 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 1**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 11-ի N 01.1/14-2/12607-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 12-ի N ՆՁ/22.2/8845-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 10-ի N 06/3-8/23708-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված դեղորայքի (1 տեղ, 9 lbs, 1,291.89 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 45 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքի «Բժշկական կենտրոն» հիվանդանոցին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 600 - Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 2**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 11-ի N 01.1/14-2/12606-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 12-ի N ՆՁ/22.2/8843-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 12-ի N 06/3-8/24203-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված արյան մեջ գլյուկոզայի մակարդակը որոշող սարքերի և երեք հատոր գրքերի (53.4 lbs, 1,128.90 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 44.65 ԱՄՆ-ի դոլար, Արևմտյան մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Սարքերը անհատույց հանձնվելու են Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, գրքերը՝ հիմնադրամի ծրագրերի բաժնի համար են:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

15/15-Ը/16428-17
18.07.2017թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ - 601 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ N 3

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 01.1/14-2/12756-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 13-ի N 06/3-8/24406-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված հատուկ խնամքի պարագաների (200 կգ, 450 ԱՄՆ-ի դոլար արժեքով, ներառյալ փոխադրման ծախսերը, Արարատյան մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Ֆրանս-հայկական սրտանոթային կենտրոն» պետական հատկացումների հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ-616-Ա**
**քաղ. Երևան**

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ Մ Ա Ս Ի Ն

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 14-ի N 01.1/14-2/12849-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 14-ի N 06/3-8/24669-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 1/06/865-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված գնդակների (45 հատ՝ 5 տեղ, 35.8 կգ ընդհանուր քաշով, 1,590.30 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ-617-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԴԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի N 01.1/14-2/12957-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 14-ի N 06/3-8/24673-17 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի N 1/06/882-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Եվրոպայի հանդբոլի ֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված հանդբոլի դարպասներ (32 հատ՝ մեկ տեղ, 329 կգ ընդհանուր քաշով, 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 794.40 բրիտանական ֆունտ ստերլինգ, «Արարատյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի հանդբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ-618-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 14-ի N 01.1/14-2/12851-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հուլիսի 13-ի N 06/3-8/24489-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ապրանքները (8 տեղ, 169.5 կգ ընդհանուր քաշով, 1,521 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 970 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ, ցանկը կցվում է) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա, 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա, 2017 թվականի մարտի 31-ի N Մ-246-Ա և հունիսի 23-ի N Մ-562-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի շրջանակներում ստացված բեռի ցանկ

| | Ապրանքի անվանում | Քանակը (ըստ չափման միավորի) | Ընդհանուր քաշը (կգ) | Աժեքը (ԱՄՆ-ի դոլար) |
|---|---|---|---|---|
| 1 | Փչովի գնդակ /1.5 մ տրամագծով/ | 6 արկղ | 165 | 1476 |
| 2 | 700w պոմպ | 1 արկղ | 2.8 | 25 |
| 3 | Ֆուտբոլի գոլեր /պլաստիկ/ | 1 արկղ | 1.7 | 20 |
| | Ընդամենը | 8 | 169.5 | 1521 |

Տեղերի քանակը՝ 8
Ընդհանուր քաշը՝ 169.5 կգ
Բեռի արժեքը՝ 1521 ԱՄՆ-ի դոլար
Փոխադրման ծախսերը՝ 970 ԱՄՆ-ի դոլար

«ՔՐՈՍՐՈԱԴՍ» «CROSSROADS» 01266593

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ-619-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 17-ի N 01.1/14-2/12959-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 13-ի N 06/3-8/24516-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա, 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա, 2017 թվականի մարտի 31-ի N Մ-246-Ա և հունիսի 23-ի N Մ-562-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հիդրոիզոլյացիա – Տ.Վ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03011107) 2017 թվականի հուլիսի 10-ին կնքված՝ N HYD 17-07 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բարեկարգման շինարարական աշխատանքների իրականացում՝ 75,908,490 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ-620-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 12-ի N 01.1/14-2/12629-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 12-ի N 06/3-8/24200-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Կանադայի քաղաքացի Նիլուֆար Աֆնանի հետ (անձնագիր՝ HH519187) 2017 թվականի մայիսի 10-ին կնքված՝ N 04-10.05.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 6,650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) ՌԴ-ի քաղաքացի Իրինա Իվանովայի հետ (անձնագիր՝ 71 5530002) 2017 թվականի հունիսի 30-ին կնքված՝ N 01-30.06.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 161,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) ՌԴ-ի քաղաքացի Եվգենի Գուրժիի հետ (անձնագիր՝ 72 7000359) 2017 թվականի հունիսի 30-ին կնքված՝ N 02-30.06.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 161,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



4) «Արեգ» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 05007719) 2017 թվականի հունիսի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պտուտակահանի ձեռքբերում՝ 157,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Բարսիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02230504) 2017 թվականի հունիսի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի սարքավորումների ձեռքբերում՝ 541,666.61 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ-621-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-561-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 12-ի N 01.1/14-2/12631-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 12-ի N 06/3-8/24191-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2017 թվականի հուլիսի 6-ի N Կ-06/07 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում բեռի ներմուծման մասին (N 1)» N Մ-561-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1,880 կգ» բառերը փոխարինել «2,660 կգ» բառերով.

2) որոշմանը կից ցանկը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

### Բեռի բաշխման ցանկ

Տեղերի քանակը՝ 74, ընդհանուր քաշը՝ 1880, բեռի արժեքը՝ 19542 ԱՄՆ-ի դոլար, տրանսպորտային ծախսերը՝ 3862,71 ԱՄՆ-ի դոլար

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Քանակը բստ չափման միավորի (արկղ) | Բրուտտո քաշը (կգ) | Նետտո քաշը (կգ) | Արժեքը ($) | Տեղերի քանակը | ՀՀ ԿԲԾՀՀ որոշումները և շահառուները |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սոնոգրաֆի ապարատ օգտ. Philips/ATL HDI 3000 1995թ. | 1 հատ | 278 | 258 | 3340 | 1 | Գյումրիի «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կլինիկա ԲՀ, «Բարեկեցիկ մանկություն և ծերություն 4» առ Մ-1356-Ա առ 29.12.2014թ. |
| 2 | Սոնոգրաֆի ապարատ օգտ. Philips UltraSound HDI 5000, model APM 2004թ. | 1 հատ | 240 | 220 | 3330 | 1 | |
| 3 | Սոնոգրաֆի ապարատ օգտ. ACUSON 128XP/10 | 1 հատ | 260 | 240 | 3330 | 1 | |
| 4 | Անոթային հետազոտման սարք օգտ. VIASYS Healthcare, VasoGuard P84 | 1համփաքածու | 60 | 56 | 1200 | 2 | |
| 5 | ԷԿԳ ապարատ օգտ. Philips M3046A | 1համփաքածու | 36 | 34,5 | 450 | 2 | |
| 6 | ԷԿԳ ապարատ օգտ. MILLENNIA REF3155A | 1 հատ | 8 | 6,5 | 300 | | |
| 7 | Ռենտգեն ժապավենի թվայնացնող սարք օգտ. Philips DiagnosticPro Advantage-2008թ., Philips DiagnosticPro Advantage-2005թ. | 2 հատ | 44 | 38 | 1000 | 2 | |
| 8 | Աչքի հետազոտման սարքի սեղան K1933RT, K2032RTP3 | 2 հատ | 105 | 89 | 1685 | 1 | |
| 9 | Պլաստիկ թաղանթ | 4 արկղ | 108 | 104 | 396 | 4 | «Զեյթուն» ուսումնական կենտրոն Մ-896-Ա առ 09.11.2012թ. (Մ-182-Ա որոշման փոփոխություն) |
| 10 | Խաղահրապարակ | 1 համփաքածու | 225 | 216 | 1087 | 5 | |
| 11 | Ֆաներա 20 հատ | 62 քմ. | 385 | 385 | 419 | 20 | |
| 12 | Պահարան օգտ. | 7 հատ | 263 | 263 | 720 | 7 | |
| 13 | Սեղան օգտ. | 3 հատ | 43 | 42 | 225 | 3 | |
| 14 | Մահճակալ օգտ. | 1 համփաքածու | 62 | 62 | 510 | 2 | |
| 15 | Բազմոց օգտ. | 5 հատ | 253 | 253 | 900 | 5 | Կարիքավոր քաղաքացիներ, «Բարեկեցիկ մանկություն և ծերություն 4» առ Մ-1356-Ա առ 29.12.2014թ. |
| 16 | Բազկաթոռ օգտ. | 2 հատ | 70 | 70 | 200 | 2 | |
| 17 | Քայլակ օգտ. | 2 հատ | 6 | 6 | 35 | 1 | |
| 18 | Հաշմանդամի սայլակ օգտ. | 1 հատ | 10 | 10 | 75 | 1 | |
| 19 | Աթոռ օգտ. | 15 հատ | 133 | 133 | 180 | 12 | |
| 20 | Լոգարանի աթոռ օգտ. | 1 հատ | 4 | 4 | 20 | 1 | |
| 21 | Դուռ փայտյա | 2 հատ | 65 | 65 | 130 | 1 | |
| 22 | Ծածկոց օգտ. | 2 հատ | 2 | 2 | 10 | | |
| | Ընդամենը | | 2660 | 2557 | 19542 | 74 | |

Տրանսպորտային ծախս՝ 3862,71($)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 622 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 11-ի N 01.1/14-2/12507-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 10-ի N ՆՁ/22.2/8695-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 10-ի N 06/3-8/23707-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք, լաբորատոր և բժշկական պարագաներ՝ 51 արկղ, 735 կգ քաշով, 155,925.74 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2,252.61 եվրո, ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2017-2018 թվականներին իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

[redacted]

| Նo | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Սոֆոսբուվիր 400 մգ, դհտ | 1036 | 9849.03 |
| 2 | Իմիպենեմ 500մգ / Սիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 8600 | 40058.8 |
| 3 | Կամերտոն, չժանգոտվող պողպատից 26 սմ, 128 Հց | 65 | 2336.1 |
| 4 | Իմիպենեմ 500մգ / Սիլաստատին 500մգ, շիշ, փոշի, ներարկման համար | 9130 | 42527.54 |
| 5 | Լինեզոլիդ, 600մգ, կաղապարով դհտ. | 17500 | 60025.00 |
| 6 | Թեսթ՝ միկոբակտերիա կոմպլեքս, գենոտիպ, հավաքածու 96 թեստի համար | 1 | 892.62 |
| 7 | Սառցե շղթայի արկղ, արկղ 15, 81դմ3 | 1 | 110.20 |
| 8 | Սառցե շղթայի արկղ, արկղ 16, 216դմ3 | 1 | 126.45 |
| 9 | **ԸՆԴՀԱՆՈՒՐ** | | 155925.74 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 623 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1067-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**(Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 04-ի N 01.1/14-2/12104-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 29-ի N 06/3-8/22251-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Դիլիջան» ազգային պարկում կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցում» ծրագրի մասին» N Մ-1067-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Բիլդեոս Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00144074) 2017 թվականի հունիսի 19-ին կնքված՝ N 03/17-AM0019 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տավուշի մարզի «Դիլիջան» ազգային պարկի տարածքում կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնի անձնակազմի տնակի արտաքին ջրագծի երկարացման և տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 2,712,745 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 624 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-044-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Հովարդ Կարագյոզյան» բժշկա-կան բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 3-ի N 01.1/14-2/11937-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 29-ի N 06/3-8/22221-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից (ՀՎՀՀ՝ 01533153) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-044-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Մաստարա» ԱԿ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09203764) 2017 թվականի հունիսի 15-ին կնքված՝ N Կ-02/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության Գորիսի մասնաճյուղ-կլինիկայի շենքի ջեռուցման և ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 7,683,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ջրտուր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01218107) 2017 թվականի հունիսի 15-ին կնքված՝ N Ծ-10/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության Գորիսի մասնաճյուղ-կլինիկայի շենքի ջեռուցման և ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության մատուցում՝ 156,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և



Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 625 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1184-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 12-ի N 01.1/14-2/12627-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 10-ի N 06/3-8/23709-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Կովկասյան ընձառյուծի պահպանությունը Հայաստանում» ծրագրի մասին» N Մ-1184-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2017 թվականի հունիսի 29-ին կնքված՝ N 07/17-GE0060 պայմանագրի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է կովկասյան ընձառյուծի վերաբերյալ բրոշյուրի տպագրում՝ 300,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 626 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N Մ-505-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
**(«Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի 2017 թվականի հուլիսի 7-ի N ՀԱՆ/Նե/1200 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-ժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ) (4)» N Մ-505-Ա որոշման 1-ին կետում «174,606.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «127,858 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 627 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-330-Ա ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-458-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 10-ի N 01.1/14-2/12380-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 10-ի N 06/3-8/23542-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է**.

1. Սահմանել, որ ԱՄՆ-ից «Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամի հասցեով «Գլոբալ Շիփինգ» կազմակերպության միջոցով, որպես մարդասիրական օգնություն ամերիկահայ բարերար Սեթա Ղազարյանի կողմից ուղարկված բեռը (466 արկղ, 11,014.146 կգ (24,280 LBS) քաշով, 126,967 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5,900 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բեռի բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Մայրատուն» բարեգործական ծրագրի մասին» N Մ-330-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1193-Ա որոշման խմբագրությամբ) և 2013 թվականի հունիսի 7-ի «Հույսի ճրագ» բարեգործական ծրագրի մասին» N Մ-458-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի հունիսի 5-ի N Մ-592-Ա որոշման խմբագրությամբ) որոշումներով հաստատված ծրագրերի շրջանակներում (38,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով (փոխադրման ծախսերը 2,070 ԱՄՆ-ի դոլար)՝ N Մ-330-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում, 88,967 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով (փոխադրման ծախսերը 3,830 ԱՄՆ-ի դոլար)՝ N Մ-458-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում):



2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արարատի, Կոտայքի և Լոռու մարզպետներին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

«ԱՐՄԵՆԻԱՆ ԼԱՅԹՀԱՈՒՍ» Բարեգործական Հիմնադրմաի կողմից ստացվող բեռի ցանկ 466տեղ/արկղ

| | ԱՆՎԱՆՈՒՄ | ՏԵՂ | ՔԱՇ | ԱՐԺԵՔ/ԱՄՆ դոլար |
|---|---|---|---|---|
| 1. | Կանացի հագուստ | 91 | 4039 | 22399 |
| 2. | Տղամարդու հագուստ | 60 | 2565 | 15136 |
| 3. | Մանկական հագուստ | 58 | 4047 | 19859 |
| 4. | Վերմակ/ծածկոց, բարձ,գորգ | 29 | 1795 | 9025 |
| 5. | Խոհանոցային պարագաներ | 37 | 1609 | 7810 |
| 6. | Պայուսակ, գրենական պիտույքներ | 22 | 693 | 5116 |
| 7. | Խառը հագուստ, գոգնոց, ժակետ, ձեռնոցներ | 27 | 2926 | 15824 |
| 8. | Նոր կոշիկներ | 6 | 1059 | 3900 |
| 9. | Մանկական և մեծահասակի տակդիրներ, խոնավ անձեռոցիկներ, միջադիրներ | 47 | 2079 | 9185 |
| 10. | Փայտե պահարաններ, աթոռ ընտանի կենդանու բույն | 3 | 190 | 660 |
| 11. | Խաղալիքներ, ամանորյա զարդարանքներ, տոնածառ | 14 | 450 | 3795 |
| 12. | Բժշկական պարագաներ, աքսեսուարներ | 22 | 865 | 3480 |
| 13. | Կար ու ձևի պարագաներ, կարի մեքենա | 6 | 204 | 1050 |
| 14. | Անկողնու շրջանակ, բազմոց-մահճակալ | 11 | 267 | 1300 |
| 15. | Անվասայլակ ,էլեկտրական սայլակ, մեծ. քայլակ | 9 | 541 | 2600 |
| 16. | Կերամիկական ժամացույց, օդորակիչ,ջերմապահ տարրա ,նկար, խոտհունձի մեքենա | 5 | 231 | 750 |
| 17. | Մանկական սայլակ,հեծանիվ,մանկական խաղահրապարակ, , մեքենայի համար նախատեսված մանկ. նստատեղ | 6 | 217 | 590 |
| 18. | Գործիքներ և այլ աքսեսուարներ, սանդուղք, լոգարանի ակսեսուարներ, ցնցուղ, հեռախոսները իրար միացնող սարք,խոսափող | 13 | 503 | 4488 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 466 | 24280 lbs<br>11014 KLG | 126967 |
| | | | Ճանապարհածախս $ 5900 | |

Տնօրենի տեղակալ Ն. Մեսրոպյան

«Արմենիան Լայթհաուս» բարեգործական հիմնադրամ / GLDU 7287974 / բեռի բաշխման ցանկ
466 տեղ/արկղ

| | | Կանացի հագուստ | Տղամարդու հագուստ | Մանկական հագուստ | Վերմակ/ծածկոց, բարձ,գորգ | Խոհանոցային պարագաներ | Պայուսակ | գրենական պիտույքներ | Նոր կոշիկներ | [illegible] | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | «ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | | | |
| | ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ | | | | | | | | | | |
| 1. | գ. Լանջազատ /80 ընտանիք/ | 8արկղ $1968 | 6արկղ $1512 | 4արկղ $1368 | | | 1արկղ $232 | 2արկղ $1172 | | | 21արկղ $6252 |
| 2. | գ. Նշավան /81 ընտանիք/ | 8արկղ $1968 | 6արկղ $1512 | 4արկղ $1368 | | | 1արկղ $232 | 2արկղ $1172 | | | 21արկղ $6252 |
| 3. | գ. Կանաչուտ /61 ընտանիք/ | 6արկղ $1476 | 6արկղ $1512 | 2արկղ $684 | | | 1արկղ $232 | | | | 15արկղ $3904 |
| | ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ | | | | | | | | | | |
| 4, | Գ. Ալափարս /90 ընտանիք/ | 9արկղ $2227 | 7արկղ $1780 | 5արկղ $1710 | | | | 3արկղ $1760 | | | 24արկղ $7477 |
| | ԼՈՌՈՒ ՄԱՐԶ | | | | | | | | | | |
| 5, | գ. Ծաղկաբեր /110 ընտանիք/ | 11արկղ $2706 | 8արկղ $2016 | 7արկղ $2394 | | | 1արկղ $232 | 5արկղ $2930 | | | 32արկղ $10278 |
| 6, | գ. Արևաշող /110 ընտանիք/ | 11արկղ $2706 | 8արկղ $2016 | 7արկղ $2394 | | | 1արկղ $232 | 5արկղ $2930 | | | 32արկղ $10278 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 7, | գ.Կարբնաջուր /110 ընտանիք/ | 11արկղ $2706 | 8արկղ $2016 | 7արկղ $2394 | | | 1արկղ $232 | 5արկղ $2930 | | | 32արկղ $10278 |
| 8, | գ. Լուսաղբյուր /108 ընտանիք/ | 11արկղ $2706 | 8արկղ $2016 | 7արկղ $2394 | | | 1արկղ $232 | 5արկղ $2930 | | | 32արկղ $10278 |
| 9, | Էջմիածնի հիվանդանոց | | | | | | | | | | |
| 10, | Հիմնադրամի շահառուներ, ովքեր անհրաժեշտ "Դրամական օժանդակություն" են ստանում հիմնադրամում (50 ընտանիք) | 1արկղ $246 | 1արկղ $252 | 1արկղ $342 | 3արկղ $933 | 6արկղ $1266 | 1արկղ $232 | | | 5արկղ $975 | 18արկղ $4246 |
| 11, | Ծիգ անձեր, սոցիալապես անապահով ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ կամ հեռախոսով ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր | 2արկղ $492 | | 2արկղ $684 | 5արկղ $1555 | 14արկղ $2954 | 3արկղ $696 | | | 7արկղ $1365 | [illegible] |
| 12, | Հիմնադրամի գրասենյակ | | | | | | | | | | |
| | «ՄԱՅՐԱՍՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | | | |
| 13, | <<ՄԱՅՐԱՍՏՈՒՆ>> ապաստանի շահառուներ (բռնության զոհ անապահով կանայք և երեխաներ) | 11արկղ $2706 | | 12արկղ $4127 | 19արկղ $5915 | 17արկղ $3590 | 9արկղ $2100 | | 6արկղ $3900 | 24արկղ $4700 | 98արկղ $27038 |
| 14, | <<Պնակ մը կերակուր>> (30 միայնակ ծերերի 5 տարբեր գյուղերից հյուրասիրություն և նվերների բաշխում | 1արկղ $246 | 1արկղ $252 | | 1արկղ $311 | | | | | 6արկղ $1170 | 9արկղ $1979 |
| 15, | <<Աստվածաշնչի ուսումնասիրություն>> քահանայի կողմից; 60-70 հոգանոց լսարանի մասնակիցներին նվերների բաշխում | 1արկղ $246 | 1արկղ $252 | | 1արկղ $311 | | 2արկղ $464 | | | 5արկղ $975 | 10արկղ $2248 |

| | | Փայտե պահարաններ, աթոռ ընտանի կենդանու բույն | Խաղալիքներ, ամանորյա զարդարանքներ, տոնածառ | Բժշկական պարագաներ, աքսեսուարներ | Կար ու ձևի պարագաներ, կարի մեքենա | Անկողնու շրջանակ, բազմոց-մահճակալ | Անվասայլակ ,էլեկտրական սայլակ, մեծ. քայլակ | Կերամիկական ժամացույց, օդորակիչ,ջերմապահ տարրա ,եկար, խոտհունձի մեքենա | Մանկական սայլակ,հեծանիվ,մանկակա և խաղահրապարակ, , մեքենայի համար նախատեսված մանկ. նստատեղ | Գործիքներ և այլ արտադրանքներ [illegible] | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | «ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | | | |
| 9, | Էջմիածնի հիվանդանոց | | | 22արկղ $3480 | | | | | | | 22արկղ $3480 |
| 11, | Ծիգ անձեր, սոցիալապես անապահով ընտանիքներ, ովքեր դիմում են գրասենյակ այցելությամբ կամ հեռախոսով ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր | | | | | | 9արկղ $2600 | | | | [illegible] |
| 12, | Հիմնադրամի գրասենյակ | 3արկղ $660 | | | | | | 5արկղ $750 | | 13արկղ $4488 | 21արկղ $5898 |
| | «ՄԱՅՐԱՍՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ | | | | | | | | | | |
| 13, | <<ՄԱՅՐԱՍՏՈՒՆ>> ապաստանի շահառուներ (բռնության զոհ անապահով կանայք և երեխաներ) | | 14արկղ $3795 | | 6արկղ $1050 | 11արկղ $1300 | | | 6արկղ $590 | | 37արկղ $6735 |

| | | |
|---|---|---|
| «ՀՈՒՅՍԻ ՃՐԱԳ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ<br>ԱՐԿՂ՝ 312<br>ԱՐԺԵՔ՝ $ 88967<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 3830 | «ՄԱՅՐԱՍՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ<br>ԱՐԿՂ՝ 154<br>ԱՐԺԵՔ $ 38000<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 2070 | ԸՆԴԱՄԵՆԸ՝ արկղ 466<br>ԱՐԺԵՔ $ 126967<br>ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍ՝ $ 5900 |

Տնօրենի տեղակալ Ն.Մեսրոպյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 628 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 29-ի N 01.1/14-2/11772-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունիսի 30-ի N ՆՁ/22.2/8307-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 29-ի N 06/3-8/22250-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (լաբորատոր ազդանյութեր՝ մեկ տեղ, 8 կգ ընդհանուր քաշով, 1,970 շվեյցարական ֆրանկին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 190.90 շվեյցարական ֆրանկ, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 629 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հունիսի 29-ի N 01.1/14-2/11770-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հունիսի 30-ի N ՆՁ/22.2/8304-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հունիսի 30-ի N 06/3-8/22438-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ուղարկված բեռի (պատվաստանյութ՝ իր կաթոցիչներով, 36 տեղ, 370.7 կգ ընդհանուր քաշով, 50,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 1,769.21 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**14 հուլիսի 2017 թվականի N Մ- 630 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 10-ի N 01.1/14-2/12393-17, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի հուլիսի 11-ի N ԻԱ/ԳՂ-2/6153-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի հուլիսի 10-ի N 03/07-1/8993-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի հուլիսի 7-ի N ՆՁ/22.2/8563-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի հուլիսի 11-ի N 06/3-8/23826-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Armenian Support Project» ոչ առևտրային կազմակերպության կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի հասցեով ուղարկված բեռի (ցածր պրոտեինով ալյուրի խառնուրդ, 15 տեղ, 225 կգ զուտ քաշով, 839.25 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 679.65 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**